10902

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«08» 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 205 - 24

Նախաձեռնող՝ *«Բուսաբանական Այգու Ընկերներ» բարեգործական ՀԿ*
Ք. Երևան, Աճառյան փ. 1

Գործունեությունը՝ *Երևանի բուսաբանական այգում Տանիա Չիչմանյանի անվան հիշատակի պուրակի կառուցում*
Ք.Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 205 - 24

«08» հոկտեմբեր 2024թ.

Երևանի բուսաբանական այգում Տանիա Չիչմանյանի անվան հիշատակի պուրակի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Բուսաբանական այգու ընկերներ» բարեգործական ՀԿ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաք,

Ներածական մաս. Երևանի բուսաբանական այգում նախատեսվում է կառուցել էվոլուցիոն ֆունկցիոնալ գոտիներով՝ Տանիա Չիչմանյանի անվան հիշատակի պուրակ /այսուհետ՝ Պուրակ/: Բուսաբանական այգին հանդիսանում է Երևանի ամենախոշոր կանաչ զանգվածներից մեկն, ունի գիտական, ինչպես նաև հանրային նշանակության ընդհանուր օգտագործման կանաչ տարածք:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Արմեն Թախտարջյանի անվան բուսաբանական այգին հիմնադրվել է 1935 թվականին, որից հետո հիմնական բարեկարգման աշխատանքներ չեն իրականացվել: 2023 թվականին Հովնանյան հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ, «Բուսաբանական այգու ընկերներ» ՀԿ-ի կողմից նախաձեռնվեց Պուրակի նախագծումն ու կառուցումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8) կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել Բուսաբանական այգու կանոնադրությունը, «Բուսաբանական այգու ընկերներ» ԲՀԿ-ի կողմից տրված 2023թ. մայիսի 5-ի նախագծային առաջադրանքի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման N 2667378 վկայականը /ծածկագիրը՝ 01-002-288-001/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բուսաբանական այգի կազմակերպելու, իրավունքի տեսակը՝ մշտական օգտագործման: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0,7 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունը գտնվում է Ավան վարչական շրջանում, Բուսաբանական այգու արևելյան՝ կենտրոնական ռեկրեացիոն հատվածում, զբաղեցնում է 6055 մ² մակերես:

Նախատեսվող գործունեության տարածքում առկա են 260 ծառ, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերը և կենդանիները բացակայում են: Բուսաշերտի հզորությունը կազմում է 0.05 - 0.5 մ: Տարածքը չի առնչվում մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում գրունտային ջրերը գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում:

Համաձայն նախագծի՝ նախատեսվում են կառուցել մանկական խաղահրապարակ, լճակ, ինչպես նաև բարեկարգել նախատեսվող գործունեության մուտքային հատվածը, տարածքում առկա ճեմուղիները, չոր գետը, կահավորել նստարաններով, տնկել այնպիսի ծառեր և բուսատեսակներ, որոնք Հայաստանում չկան:

Պուրակի կանաչապատման, կառուցապատման և բարեկարգման ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 6055 մ²,
- կանաչապատման մակերեսը՝ 4645 մ²,
- ճեմուղիների մակերեսը՝ 780 մ²,
- մանկական խաղահրապարակի մակերեսը՝ 536.7 մ²,
- լճակի մակերեսը՝ 53 մ²,
- ցայտաղբյուրին հարող գոտին՝ 23.1 մ²,

ֆունկցիոնալ գոտիավորման ցուցանիշներն են՝

- դեղաբույսեր՝ 102 մ²,
- պտեր՝ 201 մ²,
- մշտադալար մերկասերմեր՝ 327.5 մ²,
- մշտադալար մագլցող բույսեր՝ 93 մ²,
- ծառեր՝ 707 մ²,
- սենսորային այգի՝ 39 մ²,
- ծաղկանոց՝ 402 մ²,
- չոր բույսեր՝ 132 մ²:

Պուրակի մուտքային հատվածում առկա են ուղղահայաց կառուցվածքով պերգոլաներ, ինչպես նաև՝ մագլցող բույսերի համար ցանցեր: Նախատեսվում է բարեկարգել մուտքային հատավխը՝ տեղադրել ցուցանակ և գաբիոններով պերգոլաներ: Գաբիոնները կամ լարաքթոցները օգտագործվում են որպես ամրացնող կառույց: Արահետները նախատեսվում է իրականացնել ջրաթափանց նյութերով՝ բազալտե անկանոն սալերով, խոշորացված սպիտակ մարմարով և կոճղերով: Նախատեսված է կարմիր ավազով պատված խաղահրապարակ՝ շվաքարանով, փոքր խաղահրապարակներով, որոնք շրջագծվելու են տախտակամածով (հաճարենու փայտ, հականեխիչ լաքային մշակմամբ) և լցվելու է մանրահատիկ ավազ՝ գետաքար: Խաղահրապարակում տեղադրվելու են խաղասարքեր, նստարաններ, ծաղկամաններ, աղբամաններ, ցայտաղբյուրներ, 6, 4.5 և 0,8 մ բարձրության վրա գտնվող լուսատուներ, և ծառերի սաղարթները լուսավորելու նպատակով՝ գրունտային լուսատուներ: Նախատեսվում է նաև ջրամեկուսիչներով ցեմենտային հիմքով լճակ՝ որը կունենա ցեմենտավազային շերտ և խոշորահատիկ գետաքարով ներքնաշերտ: Խաղահրապարակը ցանկապատվելու է մետաղալարային ցանցով, չոր գետի գրունտի

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

ձևափոխումն իրականացվելու է հակակոռոզիոն լաքով պատված մետաղական թիթեղի միջոցով:

Շինարարական աշխատանքները բարեկարգման հետ միասին տևելու են 24 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ էքսկավատոր, բուլդոզեր, ինքնաթափ, ավտոկռունկ և բեռնատար: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու են շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Շինարարական տեխնիկայի կայանման համար նախատեսված տարածքում տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու: Շինհրապարակում նախատեսվում է մեքենաների անիվների լվացման 2 հարթակ:

Շինարարության ընթացքում օգտագործվող շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա: Շինարարության համար անհրաժեշտ բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում, մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման և աշխատողների կոմունալ կենցաղային կարիքների համար: Խմելու ջուրը կմատակարարվի շշերով՝ ըստ պահանջի, իսկ ջրցանի համար ջուրը պայմանագրային հիմունքներով: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 310,93 մ^3/օր:

Շինարարության ընթացքում աշխատողների ընդհանուր թիվը կկազմի 20 մարդ: Տարածքում առկա է մեկ զուգարան, բանվորների թվից ելնելով տեղադրվելու է նաև մեկ բիոզուգարան: Կոյուղին միացված է համայնքային կոյուղատարին: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պլաստիկե պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և անիվների լվացման ջրերը: Պարզարանում տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է հրդեհաշիջման վահանակ՝ համապատասխան պարագաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է մոտ 2500 մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանված հողային զանգվածի 1200 մ^3 բերրի հողը կօգտագործվի տարածքի կանաչապատման համար: Մնացած 1300 մ^3 ծավալով հողային զանգվածից 700 մ^3 կօգտագործվի ճոճանակների ե/բ հիմքերի հետլիցքի, իսկ 600 մ^3 կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներից շինաղբի և կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում ծառահատման աշխատանքներ չեն իրականացվելու: Տարածքում առկա բոլոր 260 ծառերը պահպանվելու են, նախատեսվում

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

է տնկել ևս 60 ծառ: Ոռոգումը կիրականացվի գործող ոռոգման համակարգի միջոցով:

Հիշատակի պուրակի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված մոնիթորինգ.

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- կենսաբազմազանության պահպանման նպատակով մշտադիտարկումներ՝ կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման ժամանակամիջոցում,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկումներ,
- թափոնների տեղափոխման կազմակերպում՝ ըստ համապատասխան պայմանագրերի,

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 1 մլն.500 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժինները ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հաշվետվության լրամշակումներում:

Հաշվի առնելով բուսաբանական այգու առանձնահատկությունը և նպատակային նշանակությունը, հանրային երկրորդ լսման ընթացքում առաջարկվեց աշխատանքային ժամերը սահմանափակել և աշխատանքներն իրականացնել ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում:

Նախատեսվող գործունեության նպատակն է հիմնել ֆունկցիոնալ գոտիներով դեղաբույսերի այգի և Բուսաբանական այգին հագեցնելը նոր բույսատեսակներով, ծառատեսակներով, ինչը գիտական, նորարարության, ծանոթության, կրթական և այլ նպատակների ուղղվածության գործունեություն է:

Ամփոփելով նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԻՉՆԵՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
- Շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում:
- Բետոնի առաքումն իրականացնել՝ բացառելով շինարարական գործունեության ենթակա տարածքի սահմաններում կամ դրանից դուրս բետոնաջրերի արտահոսքը:
- Պահպանել նախատեսվող գործունեության տարածքում առկա կանաչ զանգվածը՝ ծառերի սաղարթն, ինչպես նաև առավելագույն ջրաթափանցելիությունը, ապահովել կանաչապատ տարածքների ոռոգման համակարգը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Բուսաբանական Այգու Ընկերներ» բարեգործական ՀԿ - ի կողմից ներկայացված Երևանի բուսաբանական այգում Տանիա Չիչմանյանի անվան հիշատակի պուրակի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան